## Գծագրերի ցանկ

| № | Անվանումը | Մակնիշ |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր տվյալներ | ՈՒՀ-1 |
| 2 | Հատակագիծ | ՈՒՀ-2 |
| 3 | Հատակագիծ և հանգույցներ | ՈՒՀ-3 |
| 4 | Տեղակայման և լուսավորության հատակագիծ | ՈՒՀ-4 |
| 5 | Հասարակական զուգարանի տարածքի ուղղաձիգ հատակագծումը | ՈՒՀ-5 |
| 6 | Պոմպակայանի տարածքի ուղղաձիգ հատակագծումը | ՈՒՀ-6 |
| 7 | ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ Ա1÷Ա6 ԵՎ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ | ՈՒՀ-7 |
| 8 | ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ Ա-Ա ԵՎ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ | ՈՒՀ-8 |
| 9 | ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ Ե-0÷Ե-3 ԱՆՑՈՒՂՈՒ ԱՌԱՆՑՔՈՎ ԵՎ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ | ՈՒՀ-9 |
| 10 | 30-31-33-34 հետիոտն ճանապարհի երկայնական կտրվածքը Մ 1:$\frac{100}{200}$ | ՈՒՀ-10 |
| 11 | Զուգարանի հիմնական պատի (հենապատի) բացվածքը և կտրվածքները | ՈՒՀ-11 |

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(հատակագիծ N-1 վրա Մ1:500)

1. Ճիշտ կողմնորոշվելու նպատակով անցուղիները և հարթակները համարակալվել են կամ տառերով նշահարվել` որպես օրինակ Ա-1-Ա-2-Ա-3-Ա-4-Ա-5-Ա-6 Ամֆիթատրոնի կենտրոնով անցնող նշահարման առանցքը կամ Բ-0-Բ-1-Բ-2-Բ-3-Բ-4-Բ-5-Բ-6-Բ-7-Բ-8-Բ-9-Բ-10-Բ-11-Բ-12-Բ-13-Բ-14-Բ-15 անցնող առանցքը , որը սկսվում է N 5 զրուցարանից և շրջանցելով անֆիթատրոնի հարթակը վերջանում է ծաղկանոցի կենտրոնում: Գ-0-Գ-1-Գ-2-Գ-3-Գ-4 անցուղին սկսվում է Ա-1 կետից և վերջանում Ե-5-ում և այլն
2. Այս գծագրի վրա բերված է անցուղիների ծածկերի տեսակները, որոնք համապատասխան թվերով նշվում է երկայնական կտրվածքների կամ հատակագծերի վրա: Որոշ անցուղիների ծածկերը երկարությամբ (հատվածներով) փոխվում են, որոնց հետ կարելի է ծանոթանալ կամ երկայնական կտրվածքների վրա կամ հատակագծերի:
3. Անցուղիների և հարթակների մանրամասն նշահարումը տես գծ. N3-իվրա:
4. Կենտրոնական մուտքի հարթակը (1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13,14) բարեկարգված է եղել սակայն որոշ մասերը քայքայվել են, դեֆորմացվել, ուստի անհրաժեշտություն է առաջացել վերանորոգելու, վերակառուցելու` այսպես օրինակ 1-2-19-20-14-13 հատվածում անհրաժեշտ է բազալտե սալիկները վերատեղադրել, իսկ կոտրվածները փոխել: 1 և 20 կետերում վերակառուցել մուտքերը այնպես, որ ապահովվի թեք հարթակ հաշմանդամների համար: Եզրային եզրաքարերը (4-5 և 10-11) բավարար վիճակում են և անհրաժեշտություն չկա ձեռք տալու, իսկ կենտրոնականները (15-16 և 17-18 գծերովները) ոչ միայն խախտված են, այլև անորակ են և անհրաժեշտ է վերանորոգել:

   5-6-7-8-9-10-17-16 հարթակում կան կոտրված բազալտե սալիկներ և նստվածքային տեղեր որոնք պետք է փոխարինել նորով: Փոխարինման և վերատեղադրման ենթակա են նաև 5-7-8-9 դեկորատիվ պատի երեսպատման և գլխադիրկների բազալտե սալերի որոշ մասերը:
5. Ե-0-Ե-5 մասում առկա ե/բետոնի սալերը լրիվ հողմնահարված են և պիտի փոխարինվեն նորով:
6. Ուղղաձիգ հատակագծման ժամանակ հաշվի է առնվել հաշմանդամների հնարավարություն ապահովել այգով զբոսնելու այդ իսկ պատճառով հիմնական ուղղությունները իրականացվել են առանց աստիճանների և ոչ ավել քան 8% երկայնական թեքությամբ:
7. Կենտրոնական մասի բարեկարգման նախագծերը արվել է Մ1:200 հատակագծի հանույթի վրա, իսկ ծայրամասերը ` Մ1:500 հատակագծի վրա:
8. Հարթակները, խաղահրապարակները, ինչպես նաև շինությունները համարակալված են և պարզաբանվել են գծ. N3-ի վրա:
9. Հանույթի ոչ լիարժեքության պատճառով կլինեն որոշակի բացթողումներ, որոնք շինարարության պրոցեսում անհրաժեշտ կլինի լրացնել:
10. Ջրավազանի բանվորական գծագրերը (կաղապարային և ամրանավորման) տես համապատասխան բաժնում:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ.ՔԵԼԵՋՅԱՆ | | ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱՅԻ ԵՎ «ՋՐԱՇԽԱՐՀ»-Ի ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԱՅԳՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ | XX | | |
| Ն.Գ.ՃԱՐՏԱՐԱՊԵՏ | Գ.ԲԱԲԱՋԱՆՅԱՆ | | | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | | | ԱՆ | ՈՒՀ-1 | 11 |
| | | | ՈՒՂՂԱՁԻԳ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ | «ԵՃՇՊՀ» | | |
| | | | Ընդհանուր տվյալներ | | | |